Հավելված 1

<<ՊՄԱԹ ՇՀԾՁԲ 17/1>> ծածկագրով

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

# Դ Ի Մ ՈՒ Մ
# Շ Ր Ջ Ա Ն Ա Կ Ա Յ Ի Ն Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ր Ե Ր Ի Մ Ի Ջ Ո Ց Ո Վ Գ Ն ՈՒ Մ Կ Ա Տ Ա Ր Ե Լ ՈՒ Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ Ի Ն Մ Ա Ս Ն Ա Կ Ց Ե Լ ՈՒ

ԱՁ ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆՈՐԻԿԻ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
(Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը))

<<Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայության>> ՊՈԱԿ-ի կողմից <<ՊՄԱԹ ՇՀԾՁԲ 17/1>> ծածկագրով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի 1 (մեկ)
(չափաբաժնի (չափաբաժինների) համարը)

չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը և համաձայն է սույն հրավերի 7.5 կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումը և դրա հետ կապված՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գործողություններն իրականացնելու համար:

ԱՁ ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆՈՐԻԿԻ -ն հայտնում և հավաստում է, որ.
(Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը))

1. իր հիմնադրի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի.

2. հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ,
(երկրի անվանումը)

ԱՁ ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆՈՐԻԿԻ -ի հարկ վճարողի հաշվառման համարն է՝ <<88332786 >>:
(Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը))

ԱՁ ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆՈՐԻԿԻ -ի էլեկտրոնայանին փոստի հասցեն է՝<<tg.harutyunyan@gmail.com>>:
(Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը))

ԱՁ ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆՈՐԻԿԻ
(Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը))

(ստորագրությունը)

Կ. Տ.

Հավելված 2

<<ՊՄԱԹ ՇՀԾՁԲ 17/1>> ծածկագրով

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ԻՐ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԱՁ ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆՈՐԻԿԻ -ն հայտնում և հավաստում է, որ
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

<<ՊՄԱԹ ՇՀԾՁԲ 17/1>> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ.

1) դատական կարգով սնանկ ճանաչված չէ,

2) չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,

3) << ԱՁ ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆՈՐԻԿԻ >> -ի գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

4) << ԱՁ ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆՈՐԻԿԻ >> -ն ներառված չի գնումների գործընթացին
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,

5) բացակայում է գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

ԱՁ ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆՈՐԻԿԻ
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

Հավելված 3.2

<<ՊՄԱԹ ՇՀԾՁԲ 17/1>> ծածկագրով

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

# Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
# ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույնով ԱՁ ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆՈՐԻԿԻ -ն հայտնում և հավաստում է, որ
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

<<ՊՄԱԹ ՇՀԾՁԲ 17/1>> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում ունի համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն:

ԱՁ ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆՈՐԻԿԻ
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

**Հավելված 3.3**

**<<ՊՄԱԹ ՇՀԾՁԲ 17/1>> ծածկագրով**

**շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույնով ԱՁ ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆՈՐԻԿԻ -ն <<ՊՄԱԹ ՇՀԾՁԲ 17/1>> ծածկագրով

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում հայտնում և հավաստում է, որ կազմակերպությունն ունի կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և այդ տեխնիկական միջոցներով հնարավոր է ապահովել կնքվելիք գործարքով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը:

ԱՁ ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆՈՐԻԿԻ *-ն պարտավորվում է նշված ծածկագրով շրջանակային*

*Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)*

*համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված կարգով ներկայացնել սույն հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը*[8]*:*

ԱՁ ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆՈՐԻԿԻ

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

[8] *Սույն նախադասությունը հրավերից հանվում է, եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի*

Հավելված 3.5

<<ՊՄԱԹ ՇՀԾՁԲ 17/1>> ծածկագրով

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույնով ԱՁ ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆՈՐԻԿԻ -ն <<ՊՄԱԹ ՇՀԾՁԲ 17/1>> ծածկագրով
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում հայտնում և հավաստում է, որ կազմակերպությունն ունի կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ և այդ ֆինանսական միջոցներով հնարավոր է ապահովել կնքվելիք գործարքով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը:

ԱՁ ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆՈՐԻԿԻ
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

**Հավելված 3.6**

**<<ՊՄԱԹ ՇՀԾՁԲ 17/1>> ծածկագրով**

**շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի**

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույնով ԱՁ ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆՈՐԻԿԻ -ն <<ՊՄԱԹ ՇՀԾՁԲ 17/1>> ծածկագրով
(Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը))
շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում հայտարարում և հավաստում է, որ կազմակերպությունն ունի կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսներ և այդ աշխատանքնային ռեսուրսներով հնարավոր է ապահովել կնքվելիք գործարքով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը:

ԱՁ ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆՈՐԻԿԻ -ն *պարտավորվում է նշված ծածկագրով*
(*Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)*)
շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու *ընթացակարգի հրավերով սահմանված կարգով ներկայացնել սույն հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը*[9]*:*

ԱՁ ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆՈՐԻԿԻ
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

---

[9] *Սույն նախադասությունը հրավերից հանվում է, եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի*

**Հավելված 4**

**<<ՊՄԱԹ ՇՀԾՁԲ 17/1>> ծածկագրով**

**շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի**

# Գ Ն Ի   Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված <<ՊՄԱԹ ՇՀԾՁԲ 17/1>> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, ԱՁ ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆՈՐԻԿԻ -ն առաջարկում է պայմանագիրը կատարել

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հետևյալ գներով.

**(ՀՀ դրամ)**

| **Չափա-բաժինների համարները** | **Աշխատանքի անվանումը** | **Ինքնարժեք** | **Շահույթ** | **ԱԱՀ*** | **Առաջարկված ընդհանուր գինը /տառերով և թվերով/** |
|---|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5* | *6=3+4+5* |
| 1 | Լուսանկարների /ֆոտոպատկերների/ սկանավորման ծառայություններ | 3.750.000 | 300.000 | - | 4.050.000 (չորս միլիոն հիսուն հազար) հհ դրամ |

***Եթե Մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա փվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 5-րդ սյունակում:***

ԱՁ ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆՈՐԻԿԻ

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

«ՊՄԱԹ ՇՀԾՁԲ 17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի առաջին նիստի

ք. Երևան

«07» փետրվարի, 2017թ.

ժամը՝ 14:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Խոյեցյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ն.Եգորյան

Գ.Մուրադյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մկրտչյան

***1. «ՊՄԱԹ ՇՀԾՁԲ 17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի առաջին նիստի օրակարգը հաստատելու մասին***

/Ա.Խոյեցյան/

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին
2. «ՊՄԱԹ ՇՀԾՁԲ 17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով ընթացակարգի հրավերի տեքստի հաստատելու մասին:
3. «ՊՄԱԹ ՇՀԾՁԲ 17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, վայրը և ժամը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

***2. «ՊՄԱԹ ՇՀԾՁԲ 17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով ընթացակարգի հրավերի տեքստը հաստատելու մասին***

/Ա.Խոյեցյան/

Հաստատել «ՊՄԱԹ ՇՀԾՁԲ 17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով ընթացակարգի հրավերի տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

***3. «ՊՄԱԹ ՇՀԾՁԲ 17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, վայրը և ժամը հաստատելու մասին:***

/Ա.Խոյեցյան/

«ՊՄԱԹ ՇՀԾՁԲ 17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով ընթացակարգի հայտերի բացման նիստ հրավիրել շրջանակային համաձայնագրերի միջոցով ընթացակարգի հրավերը գրանցված հնարավոր մասնակիցներին ուղարկելու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7-րդ աշխատանքային օրվա ժամը 14:00-ն, ք. Երևան, Թաիրովի 15 հասցեով, 311 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ ______________ Ա.Խոյեցյան

անդամներ՝ ______________ Ն.Եգորյան

______________ Գ.Մուրադյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ______________ Ա.Մկրտչյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՊՄԱԹ ՇՀԾՁԲ 17/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող

հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Երևան

«16» փետրվարի, 2017թ.

ժամը՝ 14:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Խոյեցյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ն.Եգորյան

Գ.Մուրադյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մկրտչյան

**1. Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին**

/Ա.Խոյեցյան/

Գնային առաջարկների հայտերը բացվել են «Պատմամշակութային արգելոց–թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի վարչական շենքում, Թաիրովի 15 հասցեում, ծանուցման օրվան հաջորդող 7-րդ աշխատանքային օրը, ժամը 14:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին;

**2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները /անունները/ և գտնվելու վայրերի հասցեները, տվյալներ՝ ծրարները կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահաջներին համապատասխանության մասին**

/Ա.Խոյեցյան/

1. Սահմանված կարգով ս/թ փետրվարի 8-ին ծանուցվել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ տվյալ պահին շրջանակային համաձայնագրեր կնքած և տվյալ պահին որպես հնարավոր մասնակից գրանցված բոլոր կազմակերպություններին:

2. Գնային առաջարկ պարունակող ծրար կազմել և ներկայացրել է հետևյալ մասնակիցը.

| Մասնակցի անվանումը | Գտնվելու վայրը |
|---|---|
| Ա/Ձ Տիգրան Հարությունյան | Ք.Երևան, Լենինգրադյան 30շ., 18 բն. |

**3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին**

/Ա.Խոյեցյան/

Ա/Ձ Տիգրան Հարությունյանի կողմից ներկայացված ծրարում ընթացակարգի հրավերով պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան:

**4. Նախահաշվային գինը.**

Նախահաշվային ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ 4200000

**5. Մասնակցի առաջարկած գները.**

/Ա.Խոյեցյան/

| Ծառայության անվանումը | Չափման միավորը | Գնի առաջարկները /ՀՀ դրամ/ | |
|---|---|---|---|
| Համակարգչային ծառայությունների ձեռքբերում | դրամ | Ա/Ձ Տիգրան Հարությունյան | |
| | | Գինը առանց ԱԱՀ-ի | Գինը |
| | | 4050000 | 4050000 |

**6. Հանձնաժողովը որոշեց՝**

6.1 Հանձնաժողովը որոշեց՝ 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել Ա/Ձ Տիգրան Հարությունյանին:

6.2 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ կետի «1)» ենթակետի համաձայն առաջին տեղ զբաղեցնող մասնակցին առաջարկել սահմանված ժամկետում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

6.3 Հարցում ներկայացնել ՀՀ ՊԵԿ՝ ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի N 105-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն:

6.4 Գնահատող հանձնաժողովի նիստ հրավիրել 2017թ փետրվարի 22-ին, ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Խոյեցյան

անդամներ՝ Ն.Եգորյան

Գ. Մուրադյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Մկրտչյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՊՄԱԹ ՇՀԾՁԲ 17/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող

հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստի

ք. Երևան

«22» փետրվարի, 2017թ.

ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Խոյեցյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ն.Եգորյան

Գ.Մուրադյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Հակոբյան

Հիմք ընդունելով ՀՀ ԿԱ ՊԵԿ ՏՏ վարչության կողմից 21.02.2017թ-ին տրամադրած եզրակացությունը, առ այն, որ Ա/Ձ Տիգրան Հարությունյանը /ՀՎՀՀ 88332786/ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի, ինչպես նաև Ա/Ձ Տիգրան Հարությունյանի կողմից սահմանված ժամկետում ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, և համապատասխանության գնահատման թերթիկները.

**Հանձնաժողովը որոշեց՝**

1. Ընտրված մասնակից ճանաչել Ա/Ձ Տիգրան Հարությունյանին.
   1.1 Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետի անգործության ժամկետ չկիրառել:
   1.2 Պայմանագիր կնքելու համար առաջարկել ներկայացնել պայմանագրի կատարման ապահովում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0*

2. Հաստատել շրջանակային համաձայնագրի ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0*

Հանձնաժողովի նախագահ՝ ____________ Ա. Խոյեցյան

Հանձնաժողովի անդամներ՝ ____________ Ն.Եգորյան

____________ Գ.Մուրադյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ____________ Հ.Հակոբյան

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

## «ՊՄԱԹ ՇՀԾՁԲ 17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«27» փետրվարի, 2017թ.

ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Խոյեցյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ն.Եգորյան

Գ.Մուրադյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Հակոբյան

**«ՊՄԱԹ ՇՀԾՁԲ 17/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքներն ամփոփելու մասին**

/Ա.Խոյեցյան/

Հանձնաժողովը որոշեց ամփոփել ընթացակարգի արդյունքները և ընդունել ի գիտություն, որ Պատվիրատու՝ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի և ընտրված մասնակցի միջև կնքվել է՝ Համակարգչային ծառայությունների մատուցման գնման պայմանագիր՝

| Չափաբաժնի համարը | Ընտրված մասնակիցը | Պայմանագրի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Պայմանագրի համարը | Կնքման ամսաթիվը | Կատարման վերջնաժամկետը | Կանխավճարի չափը | Գինը ՀՀ դրամ | |
| | | | | | | Առկա ֆինանսական միջոցներով | Ընդհանուր[1] |
| 1 | Ա/Ձ Տիգրան Հարությունյան | ՊՄԱԹ ՇՀԾՁԲ 17/1 | 24.02.2017թ. | 2017թ. հուլիս | ---- | 4050000 | |

Ընտրված մասնակցի (մասնակիցների) անվանումը և հասցեն

| Չափաբաժնի համարը | Ընտրված մասնակիցը | Հասցե, հեռ. | Էլ.-փոստ | Բանկային հաշիվը | ՀՎՀՀ[2] / Անձնագրի համարը և սերիան |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ա/Ձ Տիգրան Հարությունյան | ք. Երևան, Լենինգրադյան փ.30շ.18բն | tg.harutyunyan@gmail.com | 163007089010 | ՀՎՀՀ 88332786 |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի նախագահ՝ ____________ Ա. Խոյեցյան

Հանձնաժողովի անդամներ՝ ____________ Ն.Եգորյան

____________ Գ.Մուրադյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ____________ Հ.Հակոբյան

[1] *Եթե պայմանագիրը կնքվելու է ընդհանուր արժեքով, սակայն նախատեսված են ավելի քիչ միջոցներ, ապա ընդհանուր գինը լրացնել փակ սյունակում, իսկ առկա ֆինանսական միջոցների մասով՝ «Առկա ֆինանսական միջոցներով» սյունյակում:*

[2] *Չի լրացվում, եթե պայմանագրի կողմ է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունում հարկ վճարողի հաշվարկային հաշիվ չունեցող անձը:*

Հաստատում եմ՝

<<Պատմամշակութային արգելոց-թանգարանների և

պատմական միջավայրի պահպանության ծառայություն>>

ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ս.Առաքելյան

«27» փետրվարի, 2017թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՊՄԱԹ ՇՀԾՁԲ 17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով ընթացակարգի գնման

1. ***Պատվիրատուի անվանումը, գտնվելու վայրը և ծառայության գնման համառոտ բնութագիրը:***

«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, որը գտնվում է ք.Երևան, Թաիրովի 15 հասցեում, հայտարարել է «ՊՄԱԹ ՇՀԾՁԲ 17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որի գնման առարկա էր հանդիսանում «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կարիքների համար համակարգչային ծառայությունների մատուցման գնումը: Գնման ենթակա ծառայության համառոտ տեխնիկական բնութագիրը ներկայացված է հրավերի՝ գնման պայմանագրի նախագծի հավելված 1-ում:

2. ***Գնման անհրաժեշտության և գնման ձևի ընտրությունը:***

«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կարիքների համար համակարգչային ծառայությունների ձեռքբերման գնման անհրաժեշտությունը պայմանավորված է ՊՈԱԿ-ի ֆոնդերից հին լուսանկարների /ֆոտոպատկերների/ վերականգմամբ և ապակե սանկարների սկանավորմամբ /թվայնացմամբ/, որը նախատեսված է ձեռք բերել կազմակերպության 2017թ. այլ միջոցների հաշվին:

Գնումների հայտարարությունն ու հրավերը էլեկտրոնային եղանակով ուղարկվել են «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ շրջանակային համաձայնագրեր կնքած և տվյալ պահին որպես հնարավոր մասնակից գրանցված ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/10 ծածկագրով բոլոր մասնակիցներին, հրապարակվել է գնումների պաշտոնական տեղեկագրում:

***3. Շրջանակային համաձայնագրով ընթացակարգի հայտ ներկայացրած մասնակցի անվանումը, հասցեն:***

Շրջանակային համաձայնագրերի միջոցով ընթացակարգի հայտ է ներկայացրել՝

Ա/Ձ Տիգրան Հարությունյան Նորիկի /այսուհետ՝ Ա/Ձ Տիգրան Հարությունյան/
ՀՎՀՀ 88332786 ք. Երևան, Լենինգրադյան փ.30շ.18բն.

***4. Շրջանակային համաձայնագրերի միջոցով ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված գինը.***

| Չ/Հ | Մասնակիցների անվանումները | Յուրաքանչյուր մասնակցի հայտով ներկայացված գները /ՀՀ դրամ/ | | |
|---|---|---|---|---|
| | | Գինն առանց ԱԱՀ | ԱԱՀ | Ընդհանուր |
| Չափաբաժին 1 | | | | |
| 1 | Ա/Ձ Տիգրան Հարությունյան | 4050000 | - | 4050000 |

***5. Շրջանակային համաձայնագրերի միջոցով ընթացակարգի արդյունքների ամփոփումը:***

1-ին տեղ զբաղեցնող Ա/Ձ Տիգրան Հարությունյանի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

Հիմք ընդունելով ՀՀ ԿԱ ՊԵԿ ՏՏ վարչության տրամադրած եզրակացությունը և գնահատման թերթիկները՝ ընտրված մասնակից է ճանաչվել Ա/Ձ Տիգրան Հարությունյանը և պայմանագիր կնքելու համար ներկայացրել է պայմանագրի կատարման ապահովում:

***6. Հաղթող մասնակցի անվանումը և պայմանագրի կնքումը:***

ա. Ա/Ձ Տիգրան Հարությունյանին պայմանագրի կատարման ապահովում ներկայացրել է 2017թ. փետրվարի 23-ին:

բ. 24.02.2017թ-ին «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի և Ա/Ձ Տիգրան Հարությունյանի միջև կնքվել է համակարգչային ծառայությունների մատուցման N ՊՄԱԹ ՇՀԾՁԲ 17/1 գնման պայմանագիր՝ 4050000 /չորս միլիոն հիսուն հազար/ ՀՀ դրամի:

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Հակոբյան

**«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կարիքների համար համակարգչային ծառայությունների մատուցման գնման պայմանագիր**

**N ՊՄԱԹ ՇՀԾՁԲ 17/1**

ք. Երևան «24» փետրվարի, 2017թ.

«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ն, ի դեմս տնօրենի պաշտոնակատար Ս.Առաքելյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և Ա/Ձ Տիգրան Հարությունյան Նորիկի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է համակարգչային ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից եռօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **4050000 (չորս միլիոն հիսուն հազար) ՀՀ դրամ**: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 30.12.2017թ.:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:
5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով1:
5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:
5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:
5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:
5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:
5.8

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

